

Գյոթեի խոսքերը այն մասին, որ գանգրաշան նկարագրությունը իսկ և իսկ այնպես, ինչպես կենդանին է, կարող է ուրախություն պատճառել երկրորդ շան երևան գալու առթիվ, այլ ոչ արվեստի նոր երկի:

Գրականությունը հասնում է ճշմարտացիության իրականության էական կողմերի գեղարվեստական ընդհանրացումներով: Եթե գեղարվեստական երկը, ճիշտ է նկատում հաշիկյանը, չի տալիս իրականության ընդհանրացված, տիպականացված պատկերը, այլ նրա լուսանկարչական անկենդան պատճենավորումը, ապա նա դառնում է երևույթների միանգամայն ավելորդ դուրլիկատ:

Յա. հաշիկյանի աշխատության հիմնական սրբություններից մեկը արվեստի ճանաչման առարկայի հարցն է: Նա հանգամանորեն անդրադառնում է այդ հարցի վերաբերյալ բոլոր տեսություններին և որ ամենագլխավորն է՝ նրանց քննադատական վերլուծության ընթացքում ձգտում է հիմնավորել իր ըմբռնումը: Մի կողմից հաշիկյանը հակում է նկատում, երբ առանձին տեսարաններ ձգտում են ժխտել արվեստի առարկայի սպեցիֆիկ բնույթը, մյուս կողմից՝ որոշ ընկերներ այդ սպեցիֆիկան արսուլյուտի հասցնելով, անջատում են արվեստը ճանաչողության այլ ձևերից: Հեղինակը մերժում է և մեկ, և մյուս ծայրահեղությունները:

Իրականության տարրեր կողմերի և արտահայտությունների ընդգրկման, գեղարվեստական արտացոլման ոլորտը ենթակա է հասարակական մարդու ճանաչման խնդրին: Եվ քանի որ մարդկային կյանքը չի սահմանափակվում միայն նեղ, անձնական պարփակված կյանքով, այլ իր արտահայտությունն է գտնում իրականության բոլոր ոլորտներում, ապա գեղարվեստական ճանաչման առարկան ձեռք է բերում համայնապարփակ բնույթ:

Յա. հաշիկյանի ուսումնասիրության աչքի ընկնող արժանիքը քննարկվող հարցը բազմակողմանիորեն ընդգրկելու մեջ է: Նա այն դիտում է տարրեր սոսնջություններով, տարրեր կապակցությունների մեջ, միշտ ձգտում ունենալով բացահայտել գեղարվեստական ճանաչողության ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնահատուկ բնույթը:

ԳԱՐ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ. I, ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐ.

ՊՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ, (1601—1650). ԿԱԶԱԵՑ Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ.

ԵՐԵՎԱՆ. 1959

Դիվանական փաստաթղթերը անցյալի պատմության ուսումնասիրման կարևորագույն աղբյուրներից են, մանավանդ ուշ միջնադարի պատմության համար: Այս տեսակետից Հ. Փափազյանի արդեն ծանոթ աշխատությունը, որի երկրորդ հատորը (պրակը) լույս տեսավ վերջերս, ունի բացառիկ նշանակություն:

Յավալի իրողությունն է, որ մեր միջնադարյան պատմության դիվանական փաստաթղթերը մեծ մասամբ ոչնչացված են: Բազրատունյաց արքունի դիվանից մեզ հասել են հրովարտական սոսկ պատառիկներ, պահպանված մեր պատմիչների մոտ, որոնց տառացիորեն վավերական լինելու մասին կասեցնակիր 3—7

րելի է կասկածել: Նույն բախտին են արժանացել նաև Զաքարյան շրջանին վերաբերող վավերագրերը: Բազրատունյաց և Զաքարյան շրջաններում վավերագրերը որոշ չափով փոխարինվել են վիմագիր արձանագրություններով, որոնք կավածագրերի գեր են կատարել:

Մեր միջնադարի պատմության հնագույն և վավերական փաստաթղթերը, որոնք պահպանվել են մինչև այսօր, վերաբերում են ԺԳ դարին: Դրանք կիլիկյան հայ թագավորների հրովարտականներն են՝ տրված վենետիկցի, ճենովացի և այլ փռանգ իշխանների, ի հաստատումն որոշ արտոնությունների և այլն: Այդ արժեքավոր փաստաթղթերը հրատարակվել են հայտնի հայագետ Վ. Լանգլուայի կողմից, մոտ մեկ դար առաջ¹:

Հայկական միջնադարին վերաբերող վավերագրերի միակ ժողովածուն, որն այս կամ այն չափով ամբողջապես մեզ է հասել, դա էջմիածնի դիվանն է, որի նյութերը սկսում են ԺԴ—ԺԵ դարերից, այսինքն մոտավորապես այն ժամանակվանից, երբ Մայր աթոռը կիլիկիայից տեղափոխվեց Մեծ Հայք: Դրանք տրված են թե իշխող արևելյան տիրակալների կողմից գրված պարսկերեն, արաբերեն և թուրքերեն լեզուներով, թե հայ կաթողիկոսների կողմից՝ հայերեն²: Այս նյութերը այժմ պահվում են մեծ մասամբ Մատենադարանում և որոշ չափով Հայաստանի Պետական կենտրոնական Արխիվում:

Հ. Փափազյանի կողմից այժմ հրատարակված այս պարսկերեն հրովարտականներ դիվանական կարևոր նյութ են ոչ միայն Հայաստանի, այլև մանավանդ պարսկական վավերագրագիտության համար: Դրանց հրատարակման համար անկասկած շնորհակալ կլինեն պարսիկ պատմաբանները, որովհետև պարսկական դիվանական փաստաթղթերը դեռ մինչև այսօր կարոտ են այսպիսի ամբողջական և խնամքով կատարված հրատարակությունների: Բրննց ընդգրկած նյութի տեսակետից նրանք լույս են սփռում ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների (Ադրբեջան, Վրաստան և այլն) պատմության վրա:

Պատահական չէ, որ այս հազվագյուտ վավերագրերի խնամքով կատարված հրատարակությունը ուղադրության և խրախուսանքի արժանացավ ոչ միայն Հայաստանում³, այլև ամբողջ Սովետական Միության⁴ մեջ և Եվրոպայում⁵: Բոլոր դրախտողներն անխտիր ընդգծեցին այն մեծ նշանակությունը, որը ներկայացնում է այս հրովարտականների հրատարակումը ոչ միայն Հայաստանի պատմության, այլև մանավանդ ընդհանուր արևելագիտության համար: Այս վերջին կետը հատկապես շեշտեցին եվրոպացի արևելագետները:

Գրախոսվող հատորը սկսվում է արժեքավոր առաջաբանով, որտեղ քննու-

¹ V. Langlois, Le trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupeniens, Venise, 1853.

² էջմիածնի Դիվանի հայերեն վավերագրերը հիմնականում ավելի ուշ շրջանից են քան պարսկական վավերագրերը: Տես Դիւան հայոց պատմութեան, Ա—ԺԵ, հրտ. Գ. Աղանեանց, Թիֆլիս 1893—1915: Նաև Հար. Աբրահամյան, Կավածագրեր, Երևան, 1941:

³ Հ. Եղանյան, Տեղեկագիր (Հաս. դիտ.) 1957, № 4: Նաև Վ. Նալբանդյան, Մատենադարանի «Բանբեր», Սովետական գրականություն, 1957, № 3:

⁴ К. Амрафян, Вопросы истории, 1956, 10, էջ 177:

⁵ Թ. Քիւրտեան, Բազմակույ, 1957, № 3—4: Ա. Zajaczkowski, Przegląd Orientalistyczny, 1957, № 3. H. R. Roemer, Über Urkunden zur Geschichte Agyptens und Persiens in islamischer Zeit, Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, Band, 107, Heft 3, Dezember, 1957, էջ 532—537:

թյան է առնված այն ժամանակաշրջանը, որին վերաբերում են հրատարակված վավերագրերը, այսինքն՝ ժէ դարի առաջին կեսը:

Իր քի առաջաբանում Հ. Փափագյանը նախ տալիս է Հայաստանի քաղաքական կյանքի համառոտ պատկերը, որից հետո նա անցնում է հայ եկեղեցու վիճակի ընդհանուր նկարագրությանը: Էջմիածնում վերահաստատված Մայր աթոռը ձեռք էր բերել թե տնտեսական ուժ, թե քաղաքական մեծ ազդեցություն: Այս դարերում, երբ հայ իշխանական տները քաղաքական կյանքում երկրորդական դեր էին խաղում, եկեղեցին իր ձեռքն է վերցնում հայության քաղաքական կյանքի ղեկը: Էջմիածինը, իր բազմաթիվ կալվածներով և ենթակա վանքերով, դարձել էր մի քաղաքական կենտրոն, որի ղեկավարների՝ կաթողիկոսների գործունեությունը շատ մեծ չափով կախված էր Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի քաղաքական հարաբերություններից: Արևելյան Հայաստանում որպես կարևոր վանական կենտրոններ, բացի էջմիածնի և նրա կողմից անմիջապես ղեկավարվող վանքերից (Հովհաննավանք, Սաղմոսավանք, Խոր Վիրապ և այլն), այդ ժամանակաշրջանի համար կարելի է հիշել Գանձասարի, Տաթևի, Դարաշամբի Մաղարթա կամ Ստեփանոսի նախավկայի, Ագուլիսի Թովմա առաքյալի և Մակվի Թադեոս առաքյալի վանքերը:

Առաջաբանի երրորդ մասը նվիրված է վանական հողատիրությանը և նրան տրված հարկային արտոնություններին: Այստեղ հեղինակը հայկական վանքապատկան հողերի վերաբերյալ հարցերը քննարկում է այդ դարի ընդհանուր հողատիրության հարցերի շրջանակներում: ԺՁ և մանավանդ ժէ դարում ավատական հողատիրության մոնոպոլական շրջանից մնացած «սոյուրդալ» կոչված ձևը (երբ ավատառուն իր ստացած հողերի գրեթե ինքնիշխան տերն է), բոլորովին քայքայվեց, տեղի տալով նոր ձևի առաջ, որը կոչվում էր «թիուլ», երբ ավատառուն իր տրամադրության տակ եղած գավառից ռոճիկի դիմաց ստանում էր հարկերի որոշ մասը (կամ ամբողջը): Այս փոփոխությունը, որն արդյունք էր կենտրոնական իշխանության որոշ ուժեղացման, իր ազդեցությունն ունեցավ նաև հայկական վանքապատկան հողերի ճակատագրի վրա: Այսպես, եթե ԺՁ դ. հրովարտականների մեջ հաճախ է խոսվում հայ եկեղեցական կալվածների հարկերից ազատ (մուաֆ) լինելու մասին, ապա ժէ դարի հրովարտականները վկայում են, որ այդ իրավունքները սահմանափակվել են: Իհարկե խոսքն այստեղ վերաբերում է նվիրված կալվածներին, որոնք կոչվում էին անշարժ (վակֆ) և ոչ թե գանձագին կալվածներին, որոնք ըստ օրենքի ենթակա էին հարկման: Իսկ հայ իշխանական (մելիքական) տները, որոնք իրենց կալվածատիրական իրավունքները ժառանգաբար էին ստացել (ժառանգական մուլք)՝ պարտավոր էին պարբերաբար վերահաստատել ժառանգական իրավունքները իրենց ենթակա գյուղերի վրա:

Առաջաբանից հետո հեղինակն անցնում է բուն նյութին և տալիս է 43 պարսկական հրովարտականների բնագրերը (վերծանումն ու լուսանկարչական պատճենը) և նրանց հայերեն թարգմանությունը: Այս վավերագրերից շատերը վերաբերում են էջմիածնի, Տաթևի, Գանձասարի, Ագուլիսի Թովմա Առաքյալի և Դարաշամբի Ստեփանոսի նախավկայի վանքերին: Շատ արժեքավոր են Շահ Աբբասի կողմից Քաշաթաղի Մելիք Հայկազին տրված երկու հրովարտականները (9 և 15)՝ մեկը տրված 1605 թ. ի պաշտպանություն այդ մելիքի իրավունքների, իսկ մյուսը տրված 1620 թ.՝ նրա սեփականատիրական իրավունքները հաստատելու Քաշաթաղում և Ղափանում: Այս վավերագրերը բացառիկ

կարևոր նշանակություն են ստանում, որովհետև Սյունյաց և Արցախի հայ մելիքներին տրված հրովարտականքը և կալվածագրերը մեծ մասամբ դեռ չեն հրատարակված (ներանց մասին ստույգ տեղեկություններ չլինելու պատճառով)։

Սակայն պետք է առանձնապես ընդգծել, որ Արևելյան Հայաստանի իշխանական տներին վերաբերյալ վավերագրերի որոնումները կարող են շատ լավ արդյունքներ տալ։ Օրինակ հենց այս գրախոսվող հատորի առաջաբանում (էջ 76, ծանոթագրություն 1) հեղինակը հայտնում է, որ սույն հատորը տպագրության հանձնելուց հետո Մատենադարանն անակնկալ կերպով մի մասնավոր անձից ձեռք է բերում Գեղարքունյաց Մելիք Շահնազարյանների կալվածատիրական գործը՝ երկու սովոր թղթապանակներից բաղկացած։ Այս վավերագրերը, որոնց իր ժամանակին անդրադարձել է Մ. Սմբատյանցը, հավաքել և դասավորել է նույն իշխանական տնից Դավիթ-խան Մելիք-Շահնազարյանց Շահփուրյանցը 1850-ական թ. իր ժառանգական իրավունքները հաստատելու նպատակով։ Այստեղ գտնվող 23 պարսկերեն վավերագրերից հնագույնը Շահ-Թահմազ Ա-ի հիշրայի 944 թ. (1538) հրովարտակն է՝ տրված Մելիք Բեկ Շահ-նազարյանցին։ Բացի այս հրովարտակից, որը ժամանակագրական տեսակետից պետք է մտնեք գրախոսվող աշխատության Ա հատորի մեջ, կան նաև Ժեղարի առաջին կեսից 6 հրովարտակներ, որոնք պարզ է, որ պետք է մտնեին երկրորդ հատորի մեջ։ Հ. Փափագյանը խոստանում է այս 7 հրովարտակները հրատարակել Ժեղարի հրովարտակների վերջին պրակում՝ որպես հավելված։

Վավերագրերի թարգմանությանը հաջորդում են ծանոթագրությունները, որոնց մեջ հեղինակը քննարկման առնելով ամեն մի վավերագրի մեջ արժարժված զանազան հարցեր, շատ հաճախ տալիս է օրինակներ պարսկական և հայկական մատենագրությունից զուգահեռ։ Այստեղ տրվում է նաև պատմական դեպքերի և դեմքերի մասին բացատրություններ և կողմնակի տեղեկություններ։

Հարկային վարչական և այլ, մեծ մասամբ արևելյան անհասկանալի բաներ, բացատրվում են հատուկ բառարանում (էջ 211—234)։ Ծիշտ է վարվել հեղինակը, որ բոլոր անծանոթ բաների բացատրությունը տվել է մի ընդհանուր բառարանում, որովհետև սա մեծ չափով հեշտացնում է դրանց ստուգումը։

Այս ամբողջ աշխատանքը բարեխճորեն ուսերեն է թարգմանված Մ. Դարինյանի կողմից (էջ 235—459)։

Թե առաջաբանում, թե ծանոթագրությունների և բառարանի մեջ հեղինակը հաճախ է տալիս արևելյան (պարսկական, արաբական և այլն) երևույթների, բաների և այլնի բացատրություններ և մեկնաբանություններ։ Այս բոլորը նա կատարում է ելնելով նյութի պահանջից և հայագիտական տեսանկյունից, որովհետև նա այդ վավերագրերին մոտենում է որպես հայոց պատմությունը լուսաբանող նյութի։ Այնպես որ ավելորդ կլինեին նրանից պահանջել մանրամասն արևելագիտական վերլուծում տալ պարսկերեն և արաբերեն բաներին և կամ բացատրել երևույթները զուտ արևելագիտական տեսանկյունից։ Նրա աշխատության ելակետը հայագիտությունն է, բայց իհարկե, իր արժեքով նա արևելագիտության համար ևս մեծ նշանակություն ունի։

Ինչպես ասվեց, Հ. Փափագյանի այս աշխատության առաջին հատորի լույս ընծայումը լայն արձագանք գտավ գիտական շրջանակներում։ Բարձր գնահատական է տալիս դերմանացի արևելագետ Հ. Ռյոմերը, որն այս աշխատությունը համարում է վերջին տարիների կարևորագույն հրատարակությունը

արևելյան վավերագրերի հրատարակման գործում և որպեսզի ցույց տա այս գրքի մեծ արժեքը, բերում է երկու փաստ: Առաջինը, որ մինչև օրս հայտնի էին Կարա-Վոյունլունների շրջանին վերաբերյալ միայն երկու վավերագիր, իսկ Փափազյանը հրատարակել է մի անգամից չորս հրովարտակ: Երկրորդը, դա վրաց Սիմեոն Թազավորի 1594 թ. հրովարտակի վրա գտնված میرزا... «մեր խոսքը» ձևն է, որի մասին արևելագիտական գրականության մեջ ասվում էր, որ 1541 թվականից հետո այլևս չի գործածվել: Սակայն ինչպես տեսնում ենք, այդ ժամանակ նա չի դադարել գործածվելուց:

Այս վերջին դիվանական میرزا... ձևը շատ մեծ ուշադրության է արժանացել ոչ միայն Ռյոմերի, այլև լեհ արևելագետ Ա. Զախլևսկու կողմից: Վերջինս Հ. Փափազյանի առաջին հատորին նվիրված իր գրախոսականում մանրամասն շարադրում է սրա ծագման հարցը, որն ըստ նրան պարսկական վավերագրերի մեջ մուտք է գործել Կարա-Վոյունլունների ժամանակ: Զախլևսկին հատկապես նշում է, որ այս հրատարակված վավերագրերը մեծ նշանակություն ունեն ոչ միայն Հայաստանի համար, այլև մանավանդ կարևորագույն աղբյուր են մահմեդական երկրների դիվանագիտության ուսումնասիրման համար և ավելացնում է, որ Հ. Փափազյանը իր հրատարակության այս կողմի վրա (վավերագրագիտության) չի ծանրանում: Մական պետք է ասել, որ Փափազյանը այս բանն անում է ելնելով իր հայագետ-իրանագետի հանգամանքից: Խնարկեցանք, որ նա զբաղվի այս հարցերով և նրա հետ կապված նաև կնքագիտության հարցերով: Վավերագրերից շատերի մեջ նա կնիքը չի բացում և բավարարվում է ասելով՝ այսինչի կամ այնինչի կնիքն է: Լավ կլիներ, որ նա բաց աներ այդ կնիքները (թե առաջին, թե այս հատորում) և բացի դրանից որոշ բացատրություն տար մահմեդական կնքագիտության մասին:

Մի քանի խոսք գրախոսվող հատորում զետեղված բնագրերի թարգմանության սկզբունքների մասին: Վավերագրերը հիմնականում թարգմանված են բարեխիղճ կերպով և կարող են անվերապահորեն օգտագործվել որպես սկզբնաղբյուր: Սակայն այսպիսի բնագրերի թարգմանության ժամանակ ծագում են դժվարություններ, որոնց առաջ կանգնել է նաև Հ. Փափազյանը: Արևելյան միջնադարյան գրականության մեջ շատ տարածված է ուղղցիկ, ճոռմաբան ոճը, երբ գրողը մի ածականով երբեք չի բավարարվում, կամ խոսելով որևէ իշխանավորի մասին, իրար հետևից շարում է մի քանի տիտղոսներ կամ էլ արձակին չափածոյի գունավորում տալու համար ձգտում է, որ իրար հաջորդող ածականները կամ տիտղոսները իրենց վերջին վանկով իրար համապատասխանեն և ստեղծեն որոշ երաժշտականություն: Խնարկեց սա շատ զեղեցիկ է և հաճելի գեղարվեստական գրականության մեջ, բայց երբ նույնը, թեկուզ որոշ չափով, կիրառվում է նաև պաշտոնական վավերագրերի մեջ, որոշ անհարմար վիճակ է ստեղծվում այն թարգմանելու դեպքում, որովհետև վավերագրերը պետք է տառացիորեն թարգմանել, այսինքն չկրճատել կամ չավելացնել (ինչքան որ հնարավոր է): Ահա այսպիսի վիճակում է գտնվել անխուսափելիորեն նաև Հ. Փափազյանը, որը թարգմանության մեջ թույլ է տվել փոքրիկ վրիպումներ:

Այսպես, օրինակ, 16-րդ վավերագրում. که هرگاه میباید بقلی جدید الاسلام «եթե մեհդիկուլի անունով նոր մուսուլման դարձած մեկը մահանա...» նախադասության մեջ «անունով» բառը Փափազյանի կողմից է ավելաց-

ված, առանց անկյունավոր փակագծերի մեջ առնվելու: Այս բանը նրա մոտ կրկնվել է մի քանի անգամ:

Այս վավերագրի չորս հատվածներից ամեն մեկի վերջում կա **يُنَوِّجُوا** արաբերեն արտահայտությունը, որը նրա մոտ մի բառով է թարգմանված «պարզեցեք»: Սա առաջին բառի թարգմանությունն է, իսկ երկրորդը կուլ է գրնացած: Այս վերջինը մի քիչ դժվար է հասկանալ, որովհետև **يُنَوِّجُوا** բայը իմաստի տեսակետից (նշանակում է բռնի կուլ տալ), չի համապատասխանում նախկին բառին: Իսկ եթե կետի ավելացմամբ կարդանք **يُنَوِّجُوا** (نَوِّجُوا և نَوِّجُوا) այդ դեպքում վերոհիշյալ նախադասությունը կարելի է թարգմանել «պարզեցեք, լուծեցեք»: Սակայն դժվարությունը նրանումն է, որ բուն վավերագրի վրա կետ չի նկատվում:

Եվ կամ 17-րդ վավերագրում **وَأَنْتُمْ كَمَشْ** դարձվածքը կրճատ թարգմանված է «ըստ իրենց հավատքի», այնինչ նույն վավերագրի նույն դարձվածքը մի քիչ ստորև թարգմանված է «հավատքում և դավանանքում», որն ավելի ճիշտ է:

Նույն վավերագրի մեջ կա **وَأَنْتُمْ كَمَشْ** արտահայտությունը, որը նա թարգմանել է՝ Ագուլիսի վանքին, այնինչ նույն **وَأَنْتُمْ كَمَشْ** արտահայտությունը նույն վավերագրի մեջ թարգմանել է՝ վանքի վանահորը, որը իհարկև ճիշտ է:

Թարգմանությունների մեջ լինում են դեպքեր, երբ իմաստը մոտավորապես է տրվում: Օրինակ **وَأَنْتُمْ كَمَشْ** ավելի լավ կլիներ թարգմանել ոչ թե «ամենաիմաստունն Աստված» այլ «ամենագետն Աստված է»: Սա ասվում է այն իմաստով, որ իրենք (դատավորները) այսպես են դատում, բայց ճշմարտությունը միայն Ալլահը գիտի:

21-րդ վավերագրում, որտեղ սկզբում հիշեցվում է, թե ինչպես պետք է վարվել իրավական փաստաթղթերի շարադրման ժամանակ, ասվում է նաև **وَأَنْتُمْ كَمَشْ**: Սա փափազյանի մոտ կրճատ ձևով թարգմանված է. «Շարիաթի վճիռը իրենց պարտականությունը համարեն», այնինչ պետք էր թարգմանել «Շարի ի լուսավոր վճիռը իրենց ուղեցույց և առաջնորդ համարեն»:

Հ. Փափազյանի այս աշխատությունը (իր երկու հատորներով) մի արժեքավոր ներդրում է Հայաստանին վերաբերող դիվանական վավերագրերի հրատարակման և ուսումնասիրման հարցում:

Ցանկալի է, որ, ինչպես հենց հեղինակն է խոստանում, շուտով հրատարակության հանձնի նույն ժամանակաշրջանի կալվածագրերը, որոնք ժամանակագրական տեսակետից մի հարյուրամյակով ավելի հին են, քան հրատարակված հնագույն հրովարտակաները: Այս վավերագրերի ամբողջական հրատարակությունը աղբյուրագիտական մի լուրջ գործ կլինի ոչ միայն հայագիտության, այլև ընդհանուր արևելագիտության համար:

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

